

## Արձանագրություն N6

### Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

28.04.2017թ. նիստի

#### Օրակարգ

1. 2016-2017 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվությունները/Շ. Պարոնյան, Յու. Գաբրիելյան, Զ. Հարությունյան/:
2. 2016-2017 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 25-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Յու. Գաբրիելյանը նշեց, որ խմբի համալրումը դժվարին գործընթաց էր, բայց ամբիոնը կարողացավ այն բարեհաջող ավարտին հասցնել: Հաջող ավարտին է հասցվել նաև մագիստրոսական ծրագրերի կազմումը, որը նույնպես ահռելի աշխատանք էր պահանջում: Շատ են Գերմանիայի հետ փոխանակման ծրագրերը, ուսանողները գնում են նաև աշխատելու, կարևորն այն է, որ կա լեզուն սովորելու մոտիվացիա: Ամբիոնն ակտիվորեն մասնակցում է որակավորման դասընթացներին: Կան օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններ, որոնք ամբիոնը փորձում է հաղթահարել նաև դեկանի և համալսարանի ջանքերով: Շ Պարոնյանը զեկուցեց, որ ուսումնական գործընթացն ամբիոնում նորմալ է ընթանում, ամբիոնը կիրառում է ժամանակակից ուսումնական ծրագրերում և լսարանում փորձում է ներդնել ժամանակակից միջազգային տեխնոլոգիական միջոցներ՝ հաշվի առնելով նաև ուսանողների և դասախոսների հայկական մենտալիտետը: Կարևորվում է ինտերնետային հնարավորությունների կիրառումը լսարանում: Հնարավորինս կիրառվում են աուդիո թելադրություններ, փոխադրություններ տալու ինտերնետային հնարավորությունները, որոնք նպաստում են դասապրոցեսի հաջող անցկացմանը: Ամբիոնի անդամները մասնակցել են միջազգային գիտաժողովների, ներկայացրել սովորածը ամբիոնային սեմինարներում՝ նպաստելով ոչ միայն գիտաժողովի մասնակիցների, այլև բոլոր դասախոսների կողմից լսարանում նոր մոտեցումների գործնական կիրառմանը: Ամբիոնում դասեր են անցկացվում ամերիկյան դեսպանատան կողմից գործուղված դասախոսի կողմից, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել ուսանողների մոտ: Այս բոլոր քայլերը նպաստում են կրթության միջազգայնացման համալսարանական համընդհանուր մոտեցումներին: Ամբիոնի չորս դասախոսներ մասնակցել են նաև Երևանում կազմակերպված գիտաժողովի՝ նվիրված ուսումնական եվրոպական չափանիշների ներդրմանը: Տպագրվել է տաս հոդված, տպագրության է հանձնված երեք դասագիրք: Այս ամսին անցկացվել է հերթական միջազգային գիտաժողովը, որը անդրադարձել է նաև հայկական ազգային ինքնությանը: Ներկայացվել է մագիստրոսական ծրագրի նոր հայտ՝ գործարար հաղորդակցության վերաբերյալ: Դիմորդների կայուն աճ կա մյուս ամբիոնների հետ համեմատած: Զավեն Հարությունյանը նշեց, որ ամբիոնը մեծ ուշադրություն է

դարձնում ուսումնական պրոցեսի: Երկար աշխատանք է կատարվել մագիստրոսական ծրագրերի վրա: Թեկնածուական ատենախոսությունները դանդաղում են, սեպտեմբերից կսկսվեն պաշտպանությունները: Միջազգային համագործակցության առումով շատ ակտիվ են ընթանում աշխատանքները, քանի որ Հայաստանն ու ԵՊՀ-ն համալրել են ֆրանկոֆոն երկրների և համալսարանների շարքերը: Մի ամբողջ կիսամյակ ուսանողները սովորում են Մոնպելյեի և Էքսանպրովանսի համալսարաններում: Այդտեղ դասախոսություններ են կարդացել նաև ամբիոնի դասախոսները: Դրական շատ արձագանքներ են եղել և մեր ուսանողների, և դասախոսների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միջմշակութային հաղորդակցության անզլերենի, գերմանական բանասիրության, ֆրանսիական բանասիրության ամբիոնների հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատել լավ:

2. ԼՍԵՑԻՆ՝

Ամփոփելով 2016-2017 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքները՝ դեկանը նշեց, որ ֆակուլտետի սոց. հարցման ընդհանուր արդյունքը չորս ամբողջ յոթանասուն երկու միավոր է: Կան ցածր գնահատականի մի քանի դեպք, որոնք պետք է քննարկվեն համապատասխան ամբիոնների վարիչների կողմից՝ պատճառները պարզելու համար: Անհրաժեշտության դեպքում կարելի է քննարկումներ անցկացնել ուսանողների և դասախոսների հետ միասին: Կարելի է նաև առանձին խոսել ուսանողների և դասախոսների հետ: Միակ խնդիրը ուսանողների սոց. հարցման մասնակցության ակտիվության պակասն է: Քանի որ օնլայն տարբերակով է անցկացվում սոցհարցումը, հնարավոր չէ վերահսկել բոլորի մասնակցությունը: Դեկանը հորդորեց ամբիոնի վարիչներին ավարտական թեզերի պաշտպանության ժամանակ ուսանողներին ուղղորդել, որպեսզի կիրառեն տեխնիկական միջոցներ:

3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Տպագրության երաշխավորել Բ.Գ.Թ. Ռուզաննա Պետրոսյանի «Ֆեդերիկո Գարսիա Լորկայի դրամատուրգիան» ուսումնամեթոդական ձեռնարկը:
- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Մարիամ Սիրունյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ վերաձևակերպմամբ՝ «Պատերազմը և Ռիչարդ Օլդինգտոնի վեպերը. բարոյական և սոցիալական ասպեկտներ» /դեկ.՝ Ա. Առաքելյան/:
- Հաստատել Անզլերենի թիվ 2 ամբիոնի հայցորդ Լիլիթ Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Ձրոսաշրջությանն առնչվող բառապաշարի ուսուցման հիմնախնդիրը բուհում»՝ ԺԳ.00.02 Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա /անզլերեն/» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., դոց. Ս. Չալաբյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

28 ապրիլի 2017թ.